ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան պողոտա 20, էլ.փոստ՝ info@zoo.am

«06» ապրիլի 2026թ.

Գոռ Խնկոյան Վարդգեսի Ա/Ձ-ին

(Khnkoyan.gor@mail.ru,
հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Ծովազարդ գ., Անդրանիկի փ., տուն՝ 53)

Հարգելի՛ պարոն Խնկոյան,

Հաշվի առնելով Ձեր 03.04.2026թ. գրությունը, համաձայն որի Գոռ Խնկոյան Վարդգեսի Ա/Ձ-ն (այսուհետև՝ Ա/Ձ) հրաժարվում է մատակարարել «ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-ի (այսուհետև Կազմակերպություն) և Ա/Ձ-ի միջև 13.01.2026թ.-ին կնքած N ԵԿԱ-ԳՀԱՊՁԲ-26/06-1 գնման պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 3-րդ և 5-րդ չափաբաժիններով նախատեսված ծառի ճյուղերը և փայտի տաշեղները և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը (պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը) տեղեկացնում եմ, որ Պայմանագիրը Կազմակերպության կողմից 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով միակողմանի լուծվում է:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, **պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը**:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ սույն ծանուցումը ստանալուց ԵԿԱ-ԳՀԱՊՁԲ-26/06 հրավերով սահմանված ժամկետներում որակավորման (185,250 (մեկ հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ) և պայմանագրի (123,500 (մեկ հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ) ապահովումները Կազմակերպության 11500 352711227

հաշվեհամարին Ա/Ձ-ի կողմից վճարվելու դեպքում Ա/Ձ-ն չի ներառվի Գնումների գործընթաին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում վճարումը հավաստող փաստաթղթերի բնօրինակներն անհրաժեշտ է սահմանված ժամկետում ներկայացնել ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 20 հասցեով կամ բնօրինակի սկանը ուղարկել mery.simonyan@smarttender.am էլ. փոստի հասցեին:

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ»

ՀՈԱԿ ՏՆՕՐԵՆ՝ **Ա. ՏԵՐ-ԹՈՎՄԱՍՅԱՆ**

Digitally signed by TER-TOVMASYAN ARMAN 3510790340
Date: 2026.04.07 15:36:19 AMT

Կատ. Հ. Ղազարյան
հեռ. 099 03 35 39